ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 օգոստոսի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

104
(3313)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԾԱՂԿԱՁՈՐԸ՝ ՓՈՍԵՐԻ ՄԵՋ

Հայաստանի ամենահայտնի զբոսաշրջային կենտրոններից մեկը՝ Ծաղկաձորը, այս օրերին հազարավոր զբոսաշրջիկների է ընդունում: Սակայն քաղաքի այցեքարտերից մեկին՝ ճոպանուղի տանող ճանապարհին, բացվում է մի պատկեր, որը դժվար է համատեղել «զբոսաշրջային կենտրոն» հասկացության հետ:

«Ժողովուրդ» օրաթերթի նկարահանած կադրերը փաստում են, որ դեպի ճոպանուղի տանող ճանապարհը գտնվում է անմխիթար վիճակում: Փոսերով, քանդված եւ տեղ-տեղ գրեթե անանցանելի դարձած ճանապարհը ոչ միայն անհարմարություն է պատճառում քաղաքացիներին եւ զբոսաշրջիկներին, այլեւ վնասում է մեքենաները եւ վտանգավոր իրավիճակներ ստեղծում երթեւեկության համար:

Առավել զարմանալի է, որ այս ամենը տեղի է ունենում հենց տուրիստական ամենաակտիվ սեզոնի ընթացքում, երբ Ծաղկաձոր են այցելում հազարավոր հայ եւ օտարերկրյա զբոսաշրջիկներ: Փաստացի, Հայաստանի զբոսաշրջային կարեւորագույն ուղղություններից մեկի առաջին տպավորությունը ոչ թե բարեկարգ քաղաքն է, այլ տարիներով անուշադրության մատնված ճանապարհը:

Հատկանշական է նաեւ, որ գործող քաղաքապետը՝ Նարեկ Հարությունյանը, պատրաստվում է կրկին մասնակցել համայնքի ղեկավարի ընտրություններին: Սակայն մինչ նոր խոստումներ տալը, թերեւս արժե պատասխանել շատ պարզ հարցի. եթե հնարավոր չի եղել բարեկարգել քաղաքի ամենակարեւոր զբոսաշրջային ճանապարհներից մեկը, ապա ինչո՞վ պետք է քաղաքացիները վստահեն նոր խոստումներին: Նոր ստե՞ր են պետք:



Իններորդ գումարման Ազգային ժողովի առաջին նիստը մեկնարկեց օրենքով սահմանված ընթացակարգից շեղումներով: ArmLur.am-ը ներկայացնում է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը նախատեսում է, որ առաջին նիստում ողջույնի խոսքով կարող են հանդես գալ Հանրապետության նախագահը եւ Ամենայն հայոց կաթողիկոսը, իններորդ գումարման խորհրդարանի մեկնարկը տեղի ունեցավ առանց Վեհափառ հայրապետի մասնակցության, եւ պատգամավորները զրկվեցին հայրապետական օրհնությունից: Թե ինչու Ամենայն հայոց կաթողիկոսը չէր հրավիրվել կամ ինչու չէր մասնակցել խորհրդարանի անդրանիկ նիստին, պաշտոնապես հայտնի չէ: ArmLur.am-ը դեռ մեկ շաբաթ առաջ գրավոր հարցում էր ուղարկել Ազգային ժողովի աշխատակազմ՝ պարզաբանելու՝ արդյոք Վեհափառ հայրապետին հրավեր ուղարկվել է, արդյոք նա հրաժարվել է մասնակցությունից, թե առկա են այլ պատճառներ, որոնց հետեւանքով խորհրդարանի առաջին նիստը կայացավ առանց նրա ներկայության: Սակայն մինչ օրս Ազգային ժողովի աշխատակազմը չի պատասխանել ArmLur.am-ի հարցերին: Փաստացի, պետական մարմինը շուրջ մեկ շաբաթ անպատասխան է թողել լրատվամիջոցի պաշտոնական հարցումը՝ չտրամադրելով հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկություն:

⇨ էջ 4

Երեւանի քաղաքապետարանը, ստանձնելով գործարար Գագիկ Ծառուկյանին պատկանած Multi Wellness մարզաառողջարարական համալիրի կառավարումը, կարծես որոշել է ոչ միայն փոխել կառավարման ձեւը, այլ նաեւ ջնջել համալիրի նախկին ինքնության յուրաքանչյուր հետք: ArmLur.am-ին հաճախորդները հայտնում են, որ վերջին օրերին նրանց այլեւս չեն տրամադրվում համալիրի բրենդավորված սրբիչները: Աշխատակիցները բացատրում են, որ դրանց վրա պատկերված են Multi Wellness անվանումն ու «Մուլտի Գրուպի» խորհրդանիշ առյուծը, ուստի որոշում է կայացվել դրանք այլեւս չօգտագործել: Հաճախորդներին տեղեկացվել է, որ առնվազն մոտ երկու շաբաթ նոր սրբիչներ չեն տրամադրվի, մինչեւ ձեռք կբերվեն Երեւանի քաղաքապետարանի խորհրդանիշներով նոր տարբերակներ: Սա ընդամենը մեկ դրվագն է: Համալիրի տարբեր հատվածներից արդեն հեռացվում են նախկին տարբերանշաններն ու անվանումները, դրանց փոխարեն տեղադրվում է Երեւանի քաղաքապետարանի խորհրդանիշը: Բայց այստեղ առաջանում է սկզբունքային հարց. ո՞րն է այս ամենի նպատակը: Եթե քաղաքապետարանը պնդում է, որ հաստատության խնդիրը եղել է իրավական խախտումների վերացումը, ապա ինչո՞ւ առաջին հերթին զբաղվում է ոչ թե այդ խախտումների հետեւանքների վերացմամբ, այլ բրենդի եւ խորհրդանիշների փոխարինմամբ կամ որ նույնն է՝ օբյեկտը խլելով:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամներն ավելի քան երկու տարի պետական բյուջեի միջոցներով վարձատրվել են, սակայն ՀՀ արդարադատության նախարարությունը հրաժարվում է հայտնել, թե որքան գումար է ծախսվել այդ նպատակով: Ավելին՝ նախարարության պատասխանից պարզ է դառնում, որ այսօր հանձնաժողովը փաստացի անդամներ չունի, սակայն այդպես էլ հայտնի չէ, թե որքան պետական միջոց է հատկացվել դրա գործունեության համար: «Ժողովուրդ» օրաթերթը, հղում կատարելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին, դիմել էր արդարադատության նախարար Սրբուհի Գալյանին՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի գործունեության եւ ֆինանսավորման վերաբերյալ: Մասնավորապես, խնդրել էինք հայտնել՝ ովքեր են 2022 թվականից ի վեր եղել հանձնաժողովի անդամները, որքան է կազմել նրանց վարձատրությունը, ինչ սկզբունքով է այն վճարվել՝ ամսական, թե կատարված աշխատանքի դիմաց, ինչպես նաեւ ընդհանուր որքան գումար է պետական բյուջեից հատկացվել հանձնաժողովի անդամների վարձատրությանը եւ, առհասարակ, Սահմանադրական բարեփոխումների գործընթացին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆՈՒՄ Է ՍԱՀՄԱՆՆԵՐԸ, ԻՍԿ ԵԿԵՂԵՑԻՆ՝ ԺԱՄԱՆԱԿԸ»

ArmLur.am-ի «Եկեղեցու ձայնը» հաղորդման հյուրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի եւ հրատարակչության բաժնի պետ, արժանապատիվ տեր Արարատ քահանա Պողոսյանն է:

- Տեր հայր, այսօրվա մեր հիմնական թեման եկեղեցու եւ պետության փոխհարաբերություններն են: Սակայն նախքան դրանց սահմանների մասին խոսելը, կխնդրեմ ներկայացնել, թե Հայ առաքելական եկեղեցին պատմության ընթացքում ինչ դեր է ունեցել պետականության պահպանման, անկախության վերականգնման եւ ազգային ինքնության պահպանման գործում: Դուք այս թեմային անդրադարձել եք նաեւ Ձեր «Սուրբ Էջմիածնի դերը XVI դարի հայ ազատագրական պայքարում» գրքում:

- Ժողովրդավարական պետություններում եկեղեցին եւ պետությունը սահմանադրորեն տարանջատված են, եւ այսօր սա աշխարհում առավել ընդունված մոդելն է: Սակայն միջնադարում եկեղեցի-պետություն հարաբերությունները հիմնականում համագործակցային բնույթ էին կրում: Շատ դեպքերում պետության որոշ գործառույթներ իրականացվում էին հենց եկեղեցու միջոցով: Դրանք վերաբերում էին կրթությանը, գիտությանը, օրենսդրությանը, դիվանագիտությանը, ինչպես նաեւ սոցիալական ծառայություններին: Եթե պետության հիմնական առաքելությունը մարդկանց բարեկեցության, անվտանգության եւ պետական սահմանների պաշտպանությունն է, ապա եկեղեցու առաքելությունը մարդու բարոյական կերպարի ձեւավորումն է, խղճի արթնացումը, արդարության եւ ճշմարտության քարոզը: Սակայն Հայոց պատմության առանձնահատկությունն այն է, որ Հայ առաքելական եկեղեցին իր հոգեւոր առաքելությանը զուգահեռ հաճախ ստանձնել է նաեւ ազգապահպան առաքելություն: Հայ ժողովրդի ավելի քան չորսհազարամյա պատմության ընթացքում եղել են ինչպես պետականության, այնպես էլ պետականության կորստի երկար ժամանակաշրջաններ: Երբ պետական ինստիտուտները բացակայել են, եկեղեցին իր վրա է վերցրել այնպիսի գործառույթներ, որոնք սովորաբար իրականացնում է պետությունը:

Առաջին հերթին եկեղեցին պահպանել է անկախ պետականություն ունենալու գաղափարը: Այդ գաղափարը ոչ միայն պահպանվել է ձեռագրերում կամ եկեղեցական շրջանակներում, այլ նաեւ մշտապես կենդանի է պահվել ժողովրդի գիտակցության մեջ: Բացի տեսական աշխատանքից, տարբեր ժամանակաշրջաններում եկեղեցին կատարել է նաեւ գործնական քայլեր՝ նպաստելու հայոց պետականության վերականգնմանը: Այդ պատճառով Հայ առաքելական եկեղեցու դերը մեր ազատագրական պայքարներում բացառիկ նշանակություն ունի:

- Ի՞նչ ազդեցություն պետք է ունենա եկեղեցին քաղաքական որոշումների վրա: Արդյո՞ք դա արդարացված է, եւ կարո՞ղ ենք նման օրինակներ գտնել Հայաստանի երրորդ հանրապետության պատմության մեջ:

- Ժողովրդավարական երկրներում կրոնական կառույցները սահմանադրորեն անջատված են պետությունից: Սա նշանակում է, որ եկեղեցին չի զբաղվում պետական կառավարմամբ, չի ընդունում օրենքներ, չի ղեկավարում բանակը եւ չի իրականացնում գործադիր իշխանության գործառույթներ: Սակայն դա չի նշանակում, որ եկեղեցին պետք է լիովին դուրս մնա հասարակական կյանքից: Հայ առաքելական եկեղեցին հայ ժողովրդի կյանքում ունի կարեւոր հեղինակություն, եւ այդ հեղինակության շնորհիվ կարող է ազդել հասարակական կարծիքի ձեւավորման վրա: Օրինակ՝ ընտանիքին, կրթությանը, բարոյական արժեքներին կամ ազգային ինքնությանը վերաբերող հարցերում հասարակությունը հաճախ հաշվի է առնում եկեղեցու դիրքորոշումը: Այդ ազդեցությունն իրականացվում է ոչ թե վարչական լծակներով, այլ հասարակության միջոցով: Քաղաքագիտության մեջ սա հաճախ անվանում են «փափուկ ազդեցություն» (soft power): Այսինքն՝ եկեղեցին չի մասնակցում քաղաքականությանը ուղղակիորեն, սակայն իր հեղինակության շնորհիվ կարող է ազդել քաղաքական որոշումների վրա:

- Բայց ո՞ր մոդելն է առավել ճիշտ՝ աշխարհի՞կ, թե՞ կրոնական պետությունը: Օրինակ՝ Իրանում վերջնական խոսքը պատկանում է հոգեւոր առաջնորդին, իսկ Թուրքիայում գործում է այլ մոդել:

- Երկու ծայրահեղություններն էլ կարող են խնդիրներ առաջացնել: Եթե պետությունն ամբողջությամբ դառնում է թեոկրատական, այսինքն՝ կրոնը ուղղակիորեն ղեկավարում է պետական համակարգը, ապա ժամանակի ընթացքում կարող են առաջանալ ճգնաժամեր: Պատմության ընթացքում նման օրինակներ բազմաթիվ են եղել:

Մյուս կողմից՝ երբ հասարակությունը լիովին մերժում է կրոնը, նույնպես կարող են առաջանալ լուրջ խնդիրներ: Խորհրդային Միությունը դրա օրինակներից մեկն էր: Ամենահավասարակշռված տարբերակը, իմ կարծիքով, այն մոդելն է, երբ եկեղեցին եւ պետությունը իրավաբանորեն տարանջատված են, սակայն շարունակում են համագործակցել:

Հայաստանի մոդելն այս առումով բավական հետաքրքիր է: Սահմանադրությունը ամրագրում է եկեղեցու եւ պետության տարանջատումը, սակայն միաժամանակ առանձնահատուկ կերպով ընդգծում է Հայ առաքելական եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի պատմության, մշակույթի եւ ազգային ինքնության պահպանման գործում: Եկեղեցու եւ պետության հարաբերությունները կարգավորվում են նաեւ առանձին օրենքներով, ինչը բավական յուրահատուկ մոտեցում է միջազգային փորձի մեջ:

- Կո՞ղմ եք, որ այսօր Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոնի կարգավիճակ ստանա:

- Երբ Տրդատ թագավորը քրիստոնեությունը հռչակեց պետական կրոն, դա լիովին համապատասխանում էր տվյալ ժամանակաշրջանի քաղաքական եւ հասարակական իրողություններին: Այդ ժամանակ թագավորի կամքն, ըստ էության, նաեւ ժողովրդի կամքն էր: Սակայն հետագա դարերում, հատկապես Լուսավորության ժամանակաշրջանից սկսած, ձեւավորվեց եկեղեցու եւ պետության տարանջատման սկզբունքը: Այսօր այդ սկզբունքը ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ պաշտպանում է խղճի ու դավանանքի ազատությունը: Այս պայմաններում քրիստոնեությանը պետական կրոնի կարգավիճակ տալը ոչ միայն կհակասեր գործող Սահմանադրությանը, այլեւ անհրաժեշտություն էլ չկա դրա համար: Հայ առաքելական եկեղեցին այսօր էլ իրականացնում է իր առաքելությունը՝ անկախ պետական կրոնի կարգավիճակից:

- Այդ դեպքում պետական կրոնի կարգավիճակի բացակայությունն ինչպե՞ս է անդրադառնում եկեղեցու գործունեության վրա:

- Եթե խոսքը վերաբերում է Հայ առաքելական եկեղեցուն, ապա կարելի է ասել, որ դրա վրա էական ազդեցություն չի թողնում: Եկեղեցին շարունակում է իր հիմնական առաքելությունը՝ հոգեւոր ծառայությունը, Աստծո խոսքի քարոզությունը, կրթական եւ մշակութային գործունեությունը, ինչպես նաեւ ազգային ինքնության պահպանումը: Հատկապես Սփյուռքում եկեղեցին կարեւոր դեր ունի հայապահպանության գործում՝ նպաստելով լեզվի, մշակույթի եւ ազգային արժեքների պահպանմանը: Այս առաքելությունը չի պայմանավորվում պետական կրոնի կարգավիճակով:

- Պատմության ընթացքում եղել են ժամանակաշրջաններ, երբ Հայաստանը պետականություն չի ունեցել, սակայն եկեղեցին շարունակել է գոյություն ունենալ: Նույնիսկ այսօր, օրինակ, գոյություն ունի Պոլսո պատրիարքարանը, գործում է նաեւ Արցախի թեմը, մինչդեռ պետական ինստիտուտները դադարել են գործել: Ո՞րն է եկեղեցու այդ շարունակականության գաղտնիքը:

- Եթե շատ կարճ ձեւակերպեմ, կասեմ այսպես՝ պետությունը պահպանում է սահմանները, իսկ եկեղեցին՝ ժամանակը: Երբեմն ժողովուրդը կարող է զրկվել պետականությունից, սակայն եկեղեցին շարունակում է իրականացնել իր առաքելությունը: Հայոց պատմության ընթացքում եղել են բազմաթիվ ժամանակաշրջաններ, երբ պետականությունը կորցրել ենք, սակայն եկեղեցին ոչ միայն պահպանել է իր կառույցները, այլեւ շարունակել է ծառայել ժողովրդին՝ պահպանելով հավատքը, լեզուն, մշակույթը եւ ազգային ինքնությունը: Հենց այդ շարունակականությունն է, որ հնարավորություն է տվել հայ ժողովրդին տարբեր դարաշրջաններում վերականգնել իր պետականությունը:

Շարունակությունը՝ հաջորդ համարում

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

Ո՞Վ Է ՆՇԱՆԱԿՎԵԼ

Գեւորգ Պապոյանը հայտնել է, որ Գարիկ Բոշյանը նշանակվել է «Երեւանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ» ԲԲԸ կառավարիչ: Նշենք, որ ավելի վաղ Գլխավոր դատախազության միջնորդության հիման վրա եւ Հակակոռուպցիոն դատարանի որոշմամբ՝ Գագիկ Ծառուկյանին պատկանող ընկերության բաժնետոմսերը հանձնվել էին Հայաստանի Հանրապետության կառավարմանն ու պահպանմանը՝ ի դեմս Էկոնոմիկայի նախարարության: Բայց ո՞վ է, ի վերջո, նորանշանակ կառավարիչ Գարիկ Բոշյանը, ում վստահվել է այս գործընթացը: Ուշագրավ է այն փաստը, որ կառավարության պաշտոնական կայքից նրա կենսագրությունը ջնջվել է: Այնուամենայնիվ, նրա աշխատանքային ուղուց հայտնի է, որ 2020-2021 թվականներին նա զբաղեցրել է Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի տնօրենի խորհրդականի եւ ֆինանսատնտեսական գծով տեղակալի պաշտոնները: Իսկ դրանից անմիջապես հետո՝ 2021 թվականի մարտին, Բոշյանը նշանակվել էր ՀՀ վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ: 2026-ի հուլիսի 30-ին պաշտոնից ազատվել է:

Ս. Գ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է

ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը շնորհավորական ուղերձ է հղել Ռուբեն Ռուբինյանին՝ ՀՀ 9-րդ գումարման Ազգային ժողովի նախագահ ընտրվելու կապակցությամբ: Այդ մասին հայտնում են նախագահի աշխատակազմից: Ուղերձում ասվում է. «Շնորհավորում եմ Ձեզ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ եւ մաղթում հաջողություններ այդ բարձր ու պատասխանատու առաքելության իրականացման գործում: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը մեր պետականության հիմնարար սահմանադրական ինստիտուտներից է, որի գործունեությունից մեծապես կախված են օրենսդիր իշխանության արդյունավետությունը, խորհրդարանական ժողովրդավարության զարգացումը, սահմանադրական արժեքների պահպանումը եւ հանրային վստահության ամրապնդումը: Ազգային ժողովի նախագահի բարձր պաշտոնը ենթադրում է առանձնահատուկ պատասխանատվություն խորհրդարանի բնականոն գործունեության ապահովման, արդյունավետ օրենսդրական աշխատանքի կազմակերպման, կառուցողական քաղաքական երկխոսության խթանման եւ պետական իշխանության ճյուղերի միջեւ սահմանադրական հավասարակշռության ամրապնդման գործում: Վստահ եմ, որ Ձեր պաշտոնավարումը կնպաստի Ազգային ժողովի ինստիտուցիոնալ զարգացմանը, խորհրդարանական մշակույթի հետագա ամրապնդմանը եւ այնպիսի որոշումների կայացմանը, որոնք կծառայեն Հայաստանի Հանրապետության պետական շահին, մեր պետականության շարունակական հզորացմանը, ժողովրդավարության զարգացմանը եւ քաղաքացիների բարօրությանը: Մաղթում եմ Ձեզ արգասաբեր գործունեություն, անսպառ եռանդ եւ նորանոր հաջողություններ՝ ի շահ Հայաստանի Հանրապետության, նրա սահմանադրական ինստիտուտների ամրապնդման, մեր պետության առաջընթացի եւ ժողովրդի բարեկեցիկ ու անվտանգ ապագայի»:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՔՊ-Ի ՆՈՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության նորընտիր պատգամավորներից է Լեւոն Լեւոնյանը, որը մինչ պատգամավորական մանդատ ստանալը գործունեություն է ծավալել ինչպես տեղական ինքնակառավարման, այնպես էլ գործադիր իշխանության համակարգերում:

Լեւոն Լեւոնյանը ծնվել է 1993 թվականի մարտի 17-ին՝ Թուրքմենստանի Աշխաբադ քաղաքում: Իր քաղաքական գործունեության ընթացքում նա եղել է Երեւանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ՝ հիմնականում զբաղվելով քաղաքային տրանսպորտի, երթեւեկության կազմակերպման եւ մայրաքաղաքի կառավարմանն առնչվող հարցերով: Նա նաեւ պաշտոնավարել է բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում, ավելի վաղ աշխատել է Ազգային ժողովի պատգամավորի օգնական, ինչպես նաեւ առողջապահության նախարարությունում՝ խորհրդատու:

2025 թվականի հոկտեմբերից Լեւոն Լեւոնյանն ընտրվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վերահսկող հանձնաժողովի նախագահ եւ այդ պաշտոնում վարել կուսակցության ներքին վերահսկողությանն առնչվող մի շարք նիստեր:

Հանրային ուշադրության կենտրոնում Լեւոն Լեւոնյանի անունը առավելապես հայտնվել է Երեւանի ավագանու նիստում տեղի ունեցած աղմկահարույց բախումից հետո: Իշխանության եւ ընդդիմության ներկայացուցիչների միջեւ ծագած միջադեպից հետո նա հայտարարել էր, որ բախումը հրահրել է ընդդիմությունը, իսկ իշխանական թիմը պարզապես «պատասխանել է»: Միաժամանակ Լեւոնյանը նշել էր, որ չի տեսել, թե քաղաքապետարանի պաշտոնյաները մասնակցել են ծեծկռտուքին: Նրա այս հայտարարությունները լայն արձագանք էին ստացել քաղաքական շրջանակներում եւ դարձել հանրային քննարկման առարկա:

Ընդհանուր առմամբ, Լեւոն Լեւոնյանը հայտնի է ընդդիմության հասցեին հնչեցրած կոշտ քաղաքական գնահատականներով եւ հայտարարություններով: Սակայն հրապարակային տվյալների համաձայն՝ նրա անվան շուրջ լայն հասարակական հնչեղություն ունեցող քրեական կամ կոռուպցիոն բնույթի սկանդալներ չեն արձանագրվել:

2026 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո Լեւոն Լեւոնյանը հրաժարվել է Երեւանի ավագանու մանդատից եւ ստանձնել Ազգային ժողովի պատգամավորի լիազորությունները՝ համալրելով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կազմը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՈՎՔԵ՞Ր ԵՆ

ԱՄԵՆԱԵՐԻՏԱՍԱՐԴ ՆՈՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ

Ազգային ժողովի իններորդ գումարման մեկնարկով խորհրդարանում հայտնվել են նոր եւ բավականին երիտասարդ դեմքեր: ArmLur.am-ը արձանագրել է, որ խորհրդարանական նոր ուժերի եւ իշխող խմբակցության շարքերում առանձնանում են երկու պատգամավորներ, որոնք «հազիվ» հասել են օրենքով սահմանված տարիքային շեմը: Ներկայացնում ենք ուշագրավ մանրամասներ նրանց կենսագրությունից, գույքային վիճակից եւ անցյալից:

ՇԻՐԱԶ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Քաղաքական արագ վերելք եւ անհասկանալի ֆինանսներ. Սյուզաննա Սայադյան

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ամենաերիտասարդ ներկայացուցիչներից է 25-ամյա Սյուզաննա Վարդգեսի Սայադյանը: Նա ծնվել է 2000 թվականի դեկտեմբերի 15-ին եւ դեռ 21 տարեկանում՝ 2021 թվականին, դարձել Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու անդամ: Այժմ նա ոչ միայն պատգամավոր է, այլեւ ընդգրկված է ԱԺ հաշվիչ հանձնախմբում:

Թեեւ Սայադյանի քաղաքական կարիերան շատ արագ է զարգացել, նույնը դժվար է ասել նրա գույքային վիճակի մասին, իսկ աշխատանքային այլ փորձի մասին բաց աղբյուրներում տվյալներ չկան: Պաշտոնական հայտարարագրերի համաձայն՝ նա չունի անշարժ գույք, իսկ միակ տրանսպորտային միջոցը 2003 թվականի արտադրության «Nissan» մակնիշի ավտոմեքենա է (գնահատված մոտ 3000 ԱՄՆ դոլար), որը որպես նվիրատվություն ձեռք է բերել 2021-ին: Նրա 2024 թվականի եկամուտը՝ մոտ 3.4 միլիոն դրամ, գոյացել է բացառապես ՔՊ-ից ստացված աշխատավարձից, իսկ կանխիկ միջոցները կազմել են ընդամենը 400 հազար դրամ:

Ուշագրավ է նրա 2023 թվականի հայտարարագիրը, որտեղ ի հայտ է եկել 2.5 միլիոն դրամի փոխառություն՝ առանց հստակ պարզաբանման (տրամադրված է, թե ստացված), եւ միաժամանակ արձանագրվել է նույն չափի միանվագ ծախս: Հարց է առաջանում՝ արդյոք այս արագ քաղաքական առաջխաղացումն ուղեկցվում է բավարար փորձով ու թափանցիկությամբ, թե՞ գործ ունենք հերթական կուսակցական կադրի հետ, որի հանրային ակտիվությունը գերազանցում է իրական կենսագրական կշիռը:

Թատրոնից մինչեւ պետական կառավարում. Շիրազ Մանուկյան

Խորհրդարանական ընդդիմության՝ «Ուժեղ Հայաստան» խմբակցության շարքերում աչքի է ընկնում Շիրազ Սմբատի Մանուկյանը: Ծնված 2001 թվականի մարտի 10-ին, նա նույնպես դարձել է Ազգային ժողովի ամենաերիտասարդ պատգամավորներից մեկը:

Նրա կենսագրությունը բավականին հետաքրքիր անցումներ ունի. թեեւ այժմ ներկայացնում է նոր քաղաքական ուժ, նախկինում եղել է Հայաստանի Հանրապետական կուսակցության (ՀՀԿ) ուսանողական կազմակերպության ակտիվ անդամ: Մասնագիտությամբ Շիրազ Մանուկյանն ավարտել է Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտը, սակայն այժմ որոշել է փոխել ուղղվածությունն արվեստից դեպի քաղաքագիտություն ու ուսումը հիմա շարունակում է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայում: Մանուկյանը հայտարարագիր չի ներկայացրել:

Ի՞նչ է ասում Սահմանադրությունը

Հատկանշական է, որ երկու նորընտիր պատգամավորներն էլ խորհրդարան են մուտք գործել՝ հազիվ հատելով օրենքով պահանջվող տարիքային նվազագույն շեմը: Համաձայն ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող եւ հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՐԱՆԸ ՀԵՐՔԵԼ Է

Իրանի արտաքին գործերի նախարարությունը հերքել է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հայտարարությունը, թե օգոստոսի 3-ից վերսկսվելու են ամերիկա-իրանական բանակցությունները: Թեհրանում պնդում են, որ ներկայում ԱՄՆ-ի հետ որեւէ բանակցություն չի ընթանում, իսկ ենթադրությունները վերաբերում են միայն Օմանի հետ Հորմուզի նեղուցում նավարկության հարցին:

Իրանի ԱԳՆ խոսնակ Էսմայիլ Բաղային շաբաթական ճեպազրույցի ժամանակ հայտարարել է, որ Թեհրանը ներկայում չի բանակցում Վաշինգտոնի հետ:

«Մենք այժմ Միացյալ Նահանգների հետ բանակցություններ չենք վարում: Մեր բանակցություններն Օմանի հետ են՝ Հորմուզի նեղուցով անցումն ապահովելու նպատակով»,- ասել է նա:

Այս հայտարարությունը հակասում է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի կիրակնօրյա հայտարարությանը, ըստ որի՝ օգոստոսի 3-ին պետք է մեկնարկեին Իրանի հետ նոր բանակցություններ: Թրամփը նշել էր, որ որոշել է հրաժարվել Իրանի դեմ լայնածավալ հարվածներից՝ նախընտրելով փորձել հասնել համաձայնության, որը կավարտի արդեն վեցերորդ ամիս շարունակվող պատերազմը:

ԱՄՆ նախագահի խոսքով՝ բանակցությունների հիմնական թեմաները պետք է լինեն Հորմուզի նեղուցում նավարկության ապահովումը եւ Իրանի միջուկային ծրագրի ապամիջուկայնացումը:

Միաժամանակ Իրանը հայտարարել է, որ Օմանի հետ մոտ է համաձայնության՝ նեղուցով անցնող նոր երթուղու վերաբերյալ: Սակայն Բաղային ընդգծել է, որ նման համաձայնությունը չի նշանակում Հորմուզի նեղուցի ամբողջական վերաբացում:

Թրամփի բանակցությունների մասին հայտարարությունից հետո նավթի գներն ասիական շուկաներում նվազել են. West Texas Intermediate տեսակի նավթի մեկ բարելի գինը նվազել է 4,7 տոկոսով՝ հասնելով 80,72 դոլարի:

Հիշեցնենք, որ ԱՄՆ-ն եւ Իրանը ռազմական հակամարտության մեջ են գտնվում փետրվարի 28-ից, երբ ԱՄՆ-ն եւ Իսրայելը հարվածներ հասցրին Իրանի տարածքին: Այդ ընթացքում եղել են ինչպես ռազմական սրացումներ, այնպես էլ դիվանագիտական ակտիվության փուլեր, սակայն կողմերը շարունակում են տարաձայնություններ ունենալ հատկապես Հորմուզի նեղուցի եւ Իրանի միջուկային ծրագրի շուրջ:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ

ԱԺ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԽԱԽՏՎԵՑ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏՈՒՄ

Իններորդ գումարման Ազգային ժողովի առաջին նիստը մեկնարկեց օրենքով սահմանված ընթացակարգից շեղումներով: ArmLur.am-ը ներկայացնում է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը նախատեսում է, որ առաջին նիստում ողջույնի խոսքով կարող են հանդես գալ Հանրապետության նախագահը եւ Ամենայն հայոց կաթողիկոսը, իններորդ գումարման խորհրդարանի մեկնարկը տեղի ունեցավ առանց Վեհափառ հայրապետի մասնակցության, եւ պատգամավորները զրկվեցին հայրապետական օրհնությունից:

Թե ինչու Ամենայն հայոց կաթողիկոսը չէր հրավիրվել կամ ինչու չէր մասնակցել խորհրդարանի անդրանիկ նիստին, պաշտոնապես հայտնի չէ:

ArmLur.am-ը դեռ մեկ շաբաթ առաջ գրավոր հարցում էր ուղարկել Ազգային ժողովի աշխատակազմ՝ պարզաբանելու՝ արդյոք Վեհափառ հայրապետին հրավեր ուղարկվել է, արդյոք նա հրաժարվել է մասնակցությունից, թե առկա են այլ պատճառներ, որոնց հետեւանքով խորհրդարանի առաջին նիստը կայացավ առանց նրա ներկայության: Սակայն մինչ օրս Ազգային ժողովի աշխատակազմը չի պատասխանել ArmLur.am-ի հարցերին: Փաստացի, պետական մարմինը շուրջ մեկ շաբաթ անպատասխան է թողել լրատվամիջոցի պաշտոնական հարցումը՝ չտրամադրելով հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկություն:

Հատկանշական է, որ վերջին տարիներին իշխանությունների եւ Հայ առաքելական եկեղեցու հարաբերությունները շարունակում են լարված մնալ: Այդ ֆոնին Վեհափառ հայրապետի բացակայությունը խորհրդարանի առաջին նիստից եւ դրա վերաբերյալ որեւէ պաշտոնական պարզաբանման բացակայությունը նոր հարցեր են առաջացնում:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ԱԺ ընդդիմադիր երկու խմբակցությունները օրվա վերջում գնացել են Մայր Աթոռ՝ ստանալու Կաթողիկոսի հայրապետական օրհնությունը: Իսկ ՔՊ-ականները կմնան առանց Կաթողիկոսի օրհնության:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՊՕՐԻՆԻ ՕՏԱՐՎԵԼ ԵՆ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում իրականացված քրեական վարույթի նախաքննությամբ հիմնավորվել է, որ Եղեգնաձոր համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած անձը, պաշտոնեական դիրքն օգտագործելով ծառայության շահերին հակառակ, համայնքի քաղաքային մարզահամալիրի՝ 0.466 հա մակերեսով, 3.300.000 ՀՀ դրամ շուկայական արժեքով հողամասը եւ 980,000 ՀՀ դրամ շուկայական արժեքով մարզահամալիրի կիսակառույց շենքն օտարել է ՍՊ ընկերությանը:

Մասնավորապես, նախաքննությամբ պարզվել է, որ հիշյալ պաշտոնատար անձը ՍՊ ընկերությանը 0,466 հա մակերեսով հողամասը առուվաճառքի պայմանագրով օտարել է նշված ընկերությանն այն պայմաններում, երբ աճուրդ-վաճառքը կայացած է եղել վերը նշված քաղաքային մարզահամալիրի կիսակառույց շենքի վերաբերյալ, որի հիման վրա ընկերության տնօրենն իր համար ակնհայտ կեղծ պայմանագիրը ներկայացրել է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Եղեգնաձորի տարածքային ստորաբաժանում, եւ դրանց նկատմամբ գրանցվել է ընկերության սեփականության իրավունքը:

Բացի այդ, նախաքննությամբ պարզվել է, որ Վայոց ձորի մարզի Շատին համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած անձը՝ որպես աճուրդի կազմակերպիչ եւ աճուրդավար, նույն ՍՊ ընկերության տնօրենի եւ վերջինիս կնոջ օժանդակությամբ համայնքի՝ 0.15 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողն օրենքով նախատեսված պահանջների խախտմամբ ապօրինի օտարել է նշված ընկերությանը: Արդյունքում՝ կողմերի միջեւ կնքվել է առուվաճառքի պայմանագիր, որպիսի դիտավորյալ գործողությունների հետեւանքով էական վնաս է պատճառվել Շատին համայնքի օրինական շահերին:

ՍՊ ընկերության տնօրենին մեղադրանք է ներկայացվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 1-ին մասով (2 դրվագ), 38-314-րդ հոդվածի 1-ին մասով եւ 325-րդ հոդվածի 1-ին մասով:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հատատելու եւ դատարան ուղարկելու նպատակով:

ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչությունում ավարտվել է Վեդի քաղաքում 3 անձանց կողմից 2 անչափահասի նկատմամբ հանցավոր ոտնձգություններ կատարելու վերաբերյալ քրեական վարույթի նախաքննությունը: Նախաքննության ընթացքում իրականացված մեծածավալ վարութային եւ ապացուցողական գործողությունների արդյունքում հաստատվել է, որ Վեդի քաղաքի 64-ամյա բնակիչ, տաքսու վարորդ Դ.Ա.-ն, աշխատանքի բերումով տեղեկացված լինելով համաքաղաքացու ընտանիքի սոցիալական ծանր պայմաններից բխող խոցելի վիճակի մասին, 2025 թվականի սկզբից մինչեւ 2026 թվականի ապրիլն ընկած ժամանակահատվածում, նրա անչափահաս աղջիկներից մեկի անօգնական վիճակն օգտագործելով, համոզելով եւ սպառնալիքի միջոցով ենթարկել է սեռական շահագործման՝ նրա հետ պարբերաբար ունենալով սեռական հարաբերություն: Բացի այդ, մեղադրյալ Դ.Ա.-ն նույն ընտանիքի անչափահաս աղջկա անօգնական վիճակն օգտագործելով, 2026 թվականին նրան դպրոցից տուն տանելու պատրվակով նստեցրել է իր ավտոմեքենան եւ առեւանգելով՝ տեղափոխել է Վեդիի գերեզմանատան տարածք, որտեղ նրա նկատմամբ կատարել է սեքսուալ բնույթի բռնի գործողություններ:

Մյուս մեղադրյալ, Վեդի քաղաքի 58-ամյա բնակիչ Ա.Ե.-ն, իր հարեւան, մեղադրյալ Դ.Ա.-ից տեղեկանալով նույն ընտանիքի խոցելի վիճակի մասին, 2026 թվականի ապրիլին դպրոցի ճանապարհին սպասել է անչափահաս աղջկան եւ հանդիպելով նրան, ներկայացել որպես հոր ընկեր ու առաջարկել իր ավտոմեքենայով տանել դպրոց, որից հետո առեւանգել է վերջինիս ու տեղափոխել Վեդիի եկեղեցու հարակից տարածք, որտեղ օգտվելով անչափահասի անօգնական վիճակից՝ նրա նկատմամբ կատարել է սեքսուալ բնույթի բռնի գործողություններ: Բացի այդ, Երեւան քաղաքի 39-ամյա բնակիչ Վ.Ե.-ն նույն ընտանիքի համար բարեգործություն կատարելու պատրվակով, մտերմություն է հաստատել անչափահասներից մեկի հետ, իսկ 2026 թվականի փետրվարին հերթական անգամ ընտանիքին այցելելու ժամանակ՝ նրա համար գնումներ կատարելու առիթն օգտագործելով, առանձնացել է նրա հետ, որի ընթացքում օգտվելով վերջինիս անօգնական վիճակից՝ նրա նկատմամբ կատարել է անառակաբարո գործողություններ:

Վերը նկարագրված հանցավոր արարքների համար Դ.Ա.-ի նկատմամբ հսկող դատախազի որոշմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 2-րդ մասով 1-ին կետով (երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի թրաֆիքինգը կամ շահագործումը), 191-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (անչափահասին առեւանգելը), 198-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (սեքսուալ բնույթի բռնի գործողությունները), Ա.Ե.-ի նկատմամբ՝ 191-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (անչափահասին առեւանգելը), 44-191-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (անչափահասին առեւանգելու փորձը), 198-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով (սեքսուալ բնույթի բռնի գործողությունները), իսկ Վ.Ե.-ի նկատմամբ՝ 201-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (անառակաբարո արարք կատարելը): Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը: Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին:

ԼՈՒՐԵՐ

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԴԵՊՔ

Օգոստոսի 1-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 15:20-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Մաշտոցի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Կիեւյան կամրջից քաղաքացին իրենց ցած է նետել:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ժամանել է ոստիկանության Մաշտոցի բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետ Դավիթ Ավագյանի, բաժնի պետի տեղակալ Գեւորգ Պողոսյանի գլխավորությամբ: Օպերատիվորեն ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 1-ին գումարտակի 3-րդ վաշտի պարեկները՝ գնդի հրամանատար Անդրանիկ Խաչատրյանի, գումարտակի հրամանատար Գոռ Առաքելյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Ազատ Թադեւոսյանի գլխավորությամբ:

Տարածքը սահմանազատել են նույն վաշտի պարեկներ Արթուր Խաչատրյանը եւ Դավիթ Հակոբյանը: Տեղում պարզվել է, որ ստացված տեղեկությունը հավաստի է: Կիեւյան կամրջի տակ հայտնաբերվել է 50-55 տարեկան կնոջ մարմին: Դեպքի մասին ոստիկանության Մաշտոցի բաժնից տեղեկությունը փոխանցել են ՀՀ Քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ բաժնի պետ Էդգար Բալոյանի գլխավորությամբ: Դեպքի փաստով քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզվում է մահացածի ինքնությունը: Գ. Շամշյանի տեղեկություններով՝ մահացածը Երեւանի բնակիչ 53-ամյա Սվետլանա Դ.-ն է, ով մասնագիտությամբ դաշնակահար է:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է

Օգոստոսի 1-ին առեղծվածային ու ողբերգական դեպք է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում: Ժամը 12:30-ի սահմաններում ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Սեւանի բաժնում օպերատիվ տեղեկություն է ստացվել, որ Չկալովկա բնակավայրի հարակից դաշտում դի կա:

Դեպքի վայր են ժամանել ոստիկանության Սեւանի բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետ Վարդան Սահակյանի գլխավորությամբ, ինչպես նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Գեղարքունիքի մարզի գումարտակի 1-ին վաշտի պարեկները: Տարածքը սահմանազատվել է:

Տեղում պարզվել է, որ ստացված օպերատիվ տեղեկությունը համապատասխանում է իրականությանը: Մահացածը Գեղարքունիքի մարզի բնակիչ, 71-ամյա Արամայիս Հարությունյանն է:

Դեպքի մասին տեղեկությունը փոխանցվել է ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Սեւանի քննչական բաժին, որտեղից դեպքի վայր է ժամանել քննչական խումբը: Դեպքի հանգամանքները պարզվում են:

● *Հուլիսի 27-ից օգոստոսի 3-ը մայրաքաղաքում հայտնաբերվել է առանց վարորդական իրավունքի վկայականի 153 անձ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿԻՆ ԴԱՏՈՒՄ ԵՆ

Կիրանցում ծնված, Իջեւան համայնքի Ազատամուտ գյուղի բնակիչ Արայիկ Ղազարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2026թ. հունիսի 7-ին կայանալիք Ազգային ժողովի հերթական ընտրությունների քարոզարշավի շրջանակներում ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի մասնակցությամբ 2026թ. մայիսի 11-ին Տավուշի մարզի Դիլիջան բնակավայրի կենտրոնական հատվածում կազմակերպված հավաքին մասնակցելով, քաղաքական կամ այլ հայացքներից ելնելով, հաստատապես տեղյակ լինելով իր խոսքերի հրապարակայնորեն ցուցադրվելու հանգամանքի մասին, Ռ. Քոչարյանի՝ «Պատը լամ եք պահում» հարցին ի պատասխան, անձանց խմբի նկատմամբ բռնություն գործադրելու հրապարակային կոչ է հնչեցրել, որը դրսեւորվել է «Ես էտ պատի տակին մարդկանց գնդակահարելու եմ, ես ասել եմ, ասելու եմ, ոչ էլ վախենում եմ» արտահայտությամբ, որն էլ նույն օրը տարածվել է զանգվածային լրատվության միջոց հանդիսացող համացանցում՝ «Ազատություն» լրատվական կայքում: Արայիկ Ղազարյանը ազատամարտիկ է, հրետանու սպա է եղել, նրա եղբայրը 1992թ. զոհվել է Ոսկեպարում: Ա. Ղազարյանը մեղադրվում է քրեական օրենսգրքի 330-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով («Ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաեւ այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը, որը կատարվել է հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործությունների, զանգվածային լրատվության միջոցների կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ»): Նրա շահերը պաշտպանում է փաստաբան Ռաֆիկ Մելքոնյանը: 2026թ. մայիսի 26-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի որոշմամբ Ա. Ղազարյանի նկատմամբ կիրառվել է այլընտրանքային խափանման միջոցների համակցություն՝ տնային կալանք՝ 1 ամիս ժամկետով եւ բացակայելու արգելք: 2026թ. հունիսի 23-ին Իջեւան քաղաքում Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Վազգեն Սմբատյանը որոշել է Ա. Ղազարյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին հանրային մեղադրող Վահե Գրիգորյանի միջնորդությունը մերժել, Ա. Ղազարյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց տնային կալանքը փոխել եւ նրան ազատ արձակել դատական նիստերի դահլիճում, Ա. Ղազարյանի նկատմամբ պահպանել որպես խափանման միջոց կիրառված բացակայելու արգելքը: Սույն քրեական գործով դատավարությունը գտնվում է հիմնական դատաքննության փուլում: Դատական վերջին նիստը կայացել է հուլիսի 9-ին, հաջորդը նշանակված է սեպտեմբերի 17-ին: Քրեական գործով մեղադրող Վ. Գրիգորյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել՝դատարանին խնդրելով ամբողջությամբ բեկանել Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 23.06.2026թ. որոշումը, մեղադրյալ Ա. Ղազարյանի նկատմամբ բացակայելու արգելքի կիրառումը ճանաչելով անթույլատրելի, նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել կալանքը՝3 ամիս ժամկետով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՆՉ ՈՒՆԻ

ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Կիրակի մեկնարկեց ԱԺ 9-րդ գումարման առաջին նիստը: Հիշեցնենք, որ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության քարտուղար է ընտրվել ընդդիմադիր պատգամավոր Արթուր Խաչատրյանը: Այս ֆոնին «Ժողովուրդ» օրաթերթն ուսումնասիրել է, թե ինչ է հայտարարագրել ընդդիմադիր պատգամավորը՝ 2021 թվականին պատշոնը ստանձնելու պահից մինչեւ 2025 թվականը:

Արթուր Խաչատրյանի անցած աշխատանքային ուղին

Մինչ պատգամավորական գործունեություն ծավալելը, տնտեսագետ Արթուր Խաչատրյանը պետական կառավարման համակարգում տարբեր ղեկավար պաշտոններ է զբաղեցրել: 2016-2017 թվականներին նա եղել է ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի տեղակալ, որից հետո՝ 2017-2018 թվականներին, զբաղեցրել է ՀՀ Շիրակի մարզպետի պաշտոնը: Այնուհետեւ, 2018 թվականի մայիսի 12-ից մինչեւ հոկտեմբերի 3-ը նշանակվել է ՀՀ գյուղատնտեսության նախարար եւ պաշտոնից ազատվել հոկտեմբերի 4-ին: 2019 թվականին նա նշանակվել է «Բիզնես Արմենիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, իսկ 2021 թվականի հունիսի 20-ին «Հայաստան» կուսակցությունների դաշինքի համապետական ընտրական ցուցակով ընտրվել է Ազգային ժողովի պատգամավոր: Նա նաեւ «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության անդամ է:

2021-2025 թվականներին Արթուր Խաչատրյանի գույքը նկատելիորեն պակասել է. եթե պաշտոնը ստանձնելիս նա հայտարարագրել էր 7 անշարժ գույք, ապա 2025 թվականի վերջին դրանց թիվը նվազել է՝ հասնելով 4-ի (բնակարանների վաճառքի եւ փոխանցման հետեւանքով): Դրան զուգահեռ, անշարժ գույքի վաճառքից ստացված միջոցների հաշվին ավելացել են նրա բանկային ավանդներն ու դրամական հաշիվները

Խաչատրյանի ունեցվածքը պաշտոնը ստանձնելու պահին

2021 թվականին պատգամավորի պաշտոնը ստանձնելու հայտարարագրում Արթուր Խաչատրյանը ներկայացրել էր յոթ անշարժ գույք: Դրանց թվում էին Արաբկիրում գտնվող բնակարանի 1/3 բաժնային սեփականությունը (ձեռք բերված 2020թ. այլ եղանակով), Արաբկիրում համատեղ սեփականությամբ գնված մեկ բնակարան, Դավթաշենում 2014 թվականին գնված բնակարան, Կենտրոն վարչական շրջանում ժառանգություն ստացված անհատական բնակելի տան 1/12 բաժնեմաս, Արաբկիրում գնված ավտոկայանատեղի, Աջափնյակում 2010 թվականին ժառանգած բնակարան եւ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքում ժառանգած հողամասի 1/6 բաժնեմաս:

Այդ պահին նա տրանսպորտային միջոց չի ունեցել: Բանկային հաշիվներում առկա է եղել ընդամենը 20 ԱՄՆ դոլար, իսկ կանխիկ միջոցները կազմել են 3 միլիոն դրամ: Հայտարարագրված է եղել նաեւ մեկ բաժնեմաս, որի արժեքը նշվել է 0 դրամ: Եկամուտների բաժնում ներառված 12 միլիոն 232 հազար 686 դրամից 8 միլիոն 646 հազար 923 դրամը ստացված վարկ է եղել «Արդշինբանկ»-ից, 1 միլիոն 673 հազար 688 դրամը՝ «Ամերիաբանկ»-ից, իսկ 896 հազար 421 դրամը՝ «HSBC Բանկ Հայաստան»-ից: Մնացած մասը ձեւավորվել է Պետական կառավարման ակադեմիայից (405 հազար 452 դրամ), «Ավրորա մարդասիրական նախաձեռնություն» հիմնադրամից (315 հազար դրամ), ՀՀ ֆինանսների նախարարությունից (180 հազար 25 դրամ), «Վիվատ Քոնսալթինգ» ՍՊԸ-ից (78 հազար դրամ) եւ Հայաստանում ֆրանսիական համալսարանից (37 հազար 177 դրամ): Վարկերի մայր գումարի մնացորդը կազմել է 11 միլիոն 216 հազար 932 դրամ: Նա հանդիսացել է «Ագրիմակ» ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնետերը, որը 2021 թվականի հուլիսի 30-ին 10 տարի ժամկետով հանձնել է հավատարմագրային կառավարման կնոջը՝ Գոհար Կարապետյանին:

2021 թվականի տարեկան հայտարարագիրը

2021 թվականի ընթացքում Արթուր Խաչատրյանը համատեղ սեփականությամբ ձեռք է բերել Արաբկիր վարչական շրջանում գտնվող բնակարան՝ 25 միլիոն 498 հազար 850 դրամ արժողությամբ, ինչպես նաեւ 1 միլիոն 950 հազար դրամ արժեքով ավտոկայանատեղի: Տարվա վերջում նա շարունակել է տիրապետել ընդհանուր 7 անշարժ գույքի:

Տրանսպորտային միջոց տարվա ընթացքում չի ունեցել: Տարվա վերջին բանկային հաշիվներում ունեցել է 724 հազար 627 դրամ, 326 ԱՄՆ դոլար եւ 4 ԱՄՆ դոլար, իսկ կանխիկ միջոցները կազմել են 3 միլիոն դրամ: Տարեկան եկամուտները կազմել են 15 միլիոն 420 հազար 769 դրամ, որից 3 միլիոն 576 հազար 270 դրամը՝ ԱԺ-ից ստացված աշխատավարձն է, 405 հազար 452 դրամը՝ Պետական կառավարման ակադեմիայից, 315 հազար դրամը՝ «Ավրորա» հիմնադրամից, 397 հազար 974 դրամը՝ ֆինանսների նախարարությունից, 78 հազար դրամը՝ «Վիվատ Քոնսալթինգ» ՍՊԸ-ից, իսկ 37 հազար 177 դրամը՝ Ֆրանսիական համալսարանից: Բացի այդ, ներգրավվել են նոր վարկային միջոցներ, իսկ տարեվերջին վարկերի մայր գումարի մնացորդը կազմել է 10 միլիոն 610 հազար 896 դրամ:

2022 թվականի տարեկան հայտարարագիրը

2022 թվականի սկզբին ունեցած 7 անշարժ գույքից Արթուր Խաչատրյանը հունիսի 15-ին 51 միլիոն դրամով վաճառել է Դավթաշենում գտնվող բնակարանը Արա Գրիգորյան Մկրտչին: Տարեվերջին նրա սեփականությունում մնացել է 6 անշարժ գույք: Տրանսպորտային միջոց նույնպես չի հայտարարագրվել:

Տարվա վերջում պատգամավորը ձեւավորել է 11 հազար ԱՄՆ դոլարի բանկային ավանդ: Բանկային հաշիվներին առկա է եղել 868 հազար 619 դրամ, 2 հազար 495 դրամ, 36 դոլար եւ 4 դոլար, իսկ կանխիկ դրամական միջոցները կտրուկ աճել են՝3 միլիոնից հասնելով 25 միլիոն դրամի: 2022 թվականի ընդհանուր եկամուտները կազմել են 7 միլիոն 858 հազար դրամ, որից 6 միլիոն 45 հազար 995 դրամը ԱԺ աշխատակազմից ստացված աշխատավարձն է, 848 հազար 540 դրամը՝ ավանդի տոկոս ՀՀ ֆինանսների նախարարությունից, 792 հազար դրամը՝ «Մենեջմենթ Միքս Ինովացիոն Ակադեմիա»-ից, իսկ 171 հազար 465 դրամը՝ Ֆրանսիական համալսարանից: Վարկային պարտավորությունների մնացորդը կազմել է 9 միլիոն 388 հազար 808 դրամ (որից 8 միլիոն 389 հազար 370 դրամը՝ հիփոթեքային վարկ):

2023 թվականի տարեկան հայտարարագիրը

2023 թվականին անշարժ գույքի կազմում փոփոխություն չի եղել. պահպանվել են նույն 6 գույքերը: Սակայն հունվարի 23-ին պատգամավորը 2 միլիոն 500 հազար դրամով Վարդգես Կարապետյանից ձեռք է բերել 2010 թվականի արտադրության Mitsubishi մակնիշի ավտոմեքենա:

Բանկային ավանդը տարվա վերջում 11 հազար դոլարից աճել է՝հասնելով 15 հազար ԱՄՆ դոլարի: Բանկային հաշիվներում եղել է 2 միլիոն 635 հազար 270 դրամ, 700 դրամ, 12 եվրո, 49 դոլար եւ 104 դոլար: Կանխիկ միջոցները նվազել են՝25 միլիոնից դառնալով 23 միլիոն դրամ: Տարեկան եկամուտները կազմել են 11 միլիոն 281 հազար 573 դրամ, որից 10 միլիոն 239 հազար 748 դրամը՝ ԱԺ աշխատավարձ, 824 հազար 286 դրամը՝ Ֆինանսների նախարարությունից ստացված այլ եկամուտ, 142 հազար 539 դրամը՝ Ֆրանսիական համալսարանից, իսկ 75 հազար դրամը՝ «Մենեջմենթ Միքս»-ից: Վարկային պարտավորությունների մնացորդը նվազել է՝ հասնելով 7 միլիոն 422 հազար 525 դրամի (որից 7 միլիոն 212 հազար 687 դրամը՝հիփոթեք):

2024 թվականի տարեկան հայտարարագիրը

2024 թվականի ընթացքում անշարժ գույքերի եւ տրանսպորտային միջոցի կազմը մնացել է անփոփոխ (6 անշարժ գույք եւ 1 Mitsubishi ավտոմեքենա): Հայտարարագրված է եղել նաեւ 2019 թվականին ձեռք բերված 0 դրամ արժեքով բաժնեմաս:

Բանկային ավանդները տարեվերջին կազմել են 2 միլիոն 78 հազար 132 դրամ եւ 15 հազար ԱՄՆ դոլար: Բանկային հաշիվներին եղել է 2 միլիոն 764 հազար 900 դրամ, 12 եվրո, 100 հազար 814 դրամ, 187 դոլար, 104 դոլար եւ 436 հազար 360 դրամ: Կանխիկ դրամական միջոցներն աճել են՝ հասնելով 25 միլիոն դրամի: 2024 թվականի եկամուտները կազմել են 13 միլիոն 557 հազար 909 դրամ, որոնց թվում են՝ ԱԺ աշխատավարձը (10 միլիոն 727 հազար 72 դրամ), «Մենեջմենթ Միքս»-ից ստացված եկամուտը (1 միլիոն 656 հազար դրամ), եկամտային հարկի վերադարձը (740 հազար 946 դրամ), Ֆրանսիական համալսարանից ստացված վարձատրությունը (ընդհանուր շուրջ 293 հազար դրամ) եւ Արդշինբանկից ստացված ավանդի տոկոսը (367 դոլար): Վարկային պարտավորությունների մնացորդը կազմել է 7 միլիոն 471 հազար 92 դրամ: «Ագրիմակ» ՍՊԸ-ի բաժնեմասը 2022թ. հունիսից փոխանցվել է «Էլ Ֆոր» Հաշվապահական Կենտրոն ՍՊԸ-ի հավատարմագրային կառավարմանը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

● *Մարզերում հուլիսի 27-ից օգոստոսի 3-ը պարեկները հայտնաբերել են առանց վարորդական իրավունքի վկայականի 463 անձ:*

ԼՈՒՐԵՐ

ՆԱԵՎ IMID-Ի ՄԻՔՌՈՑՈՎ

Յունիբանկը շարունակում է ընդլայնել թվային ծառայությունների հնարավորությունները՝ հաճախորդներին առաջարկելով UNIMobile հավելվածում գրանցվելու եւս մեկ հարմար տարբերակ: Այսուհետ UNIMobile հավելվածում հնարավոր է գրանցվել նաեւ imID-ով՝ ընդամենը մի քանի վայրկյանում: Դրա համար անհրաժեշտ է ներբեռնել UNIMobile հավելվածը App Store կամ Google Play, գրանցման ընթացքում ընտրել «imID նույնականացում» կոճակը եւ հետեւել պարզ հրահանգներին:

UNIMobile հավելվածի օգտատերերը ստանում են շուրջօրյա հասանելիություն բանկային ծառայություններին: Հավելվածի միջոցով հնարավոր է բացել բանկային հաշիվ, ձեւակերպել սպառողական վարկ, կատարել դրամական փոխանցումներ Հայաստանի ներսում եւ արտերկիր, համալրել կամ նվազեցնել ավանդները, ստեղծել թվային քարտեր, կատարել կոմունալ եւ այլ վճարումներ, ինչպես նաեւ օգտվել բազմաթիվ այլ ծառայություններից:

UNIMobile հավելվածում առցանց գրանցվել հնարավոր է նաեւ կենսաչափական նույնականացման միջոցով:

Յունիբանկը կշարունակի արձագանքել հաճախորդների կարիքներին՝ ներդնելով նորարարական տեխնոլոգիաներ եւ ֆինանսական ծառայությունները դարձնելով էլ ավելի հասանելի եւ հարմար: *(Գ)*

ՏԵՂԱԿԱՅՈՒՄ Է

Պակիստանը Հնդկաստանի հետ սահմանին տեղակայել է Չինաստանում արտադրված SH-15 տիպի 250 ինքնագնաց հաուբից՝ զգալիորեն ամրապնդելով իր հրետանային կարողությունները: Նոր համակարգերը նախատեսված են հեռահար հարվածային ներուժն ուժեղացնելու եւ բանակի մարտական պատրաստվածությունը բարձրացնելու համար: SH-15-ը կարող է զարգացնել մինչեւ 90 կմ/ժ արագություն եւ արդյունավետ գործել նաեւ բարդ տեղանքում: 155 մմ, 52 տրամաչափ երկարությամբ հրանոթը ստանդարտ զինամթերքով խոցում է մինչեւ 40 կմ հեռավորության վրա գտնվող թիրախներ, իսկ V-LAP հրթիռային արագացմամբ արկերի կիրառման դեպքում խոցման հեռավորությունը կարող է հասնել 53-72 կմ-ի: Համակարգը համալրված է ավտոմատ կրակի կառավարման համակարգով եւ հիդրավլիկ կայունացնող հենակներով, որոնք թույլ են տալիս արագ կրակ բացել եւ որպեւում արձակել մինչեւ վեց արկ: Բարձր շարժունակության շնորհիվ անձնակազմը կարող է կարճ ժամանակում փոխել դիրքը՝ նվազեցնելով հակահրետանային հարվածների վտանգը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Դեղագործության զարգացման ասոցիացիա ՀԿ-ն հայտնում է, որ կորցրել է ընկերությանը պատկանող կնիքը (ՀՎՀՀ՝ 01265883): Վերոնշյալ կնիքը համարվում է անվավեր:

ՕԳՈՍՏՈՍԻ 4-ԻՑ

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԸ

Օգոստոսի 4-ին՝ ժամը 09:00-ից, մեկնարկում է ՀՀ պետական ավագ դպրոցների 10-րդ դասարանի ընդունելության առցանց հայտագրման երկրորդ՝ հիմնական փուլը: Այս մասին տեղեկացնում են ԿԳՄՄՆ-ից:

Երկրորդ փուլով հայտագրման գործընթացը կիրականացվի ընդհանուր հիմունքներով՝ հայերենով ուսուցմամբ դասարանների ընդունելության համար, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, երկքաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (նրանց օրինական ներկայացուցիչների) համար: Հայտագրում կիրականացվի նաեւ այն սովորողների համար, որոնց ծնողներից մեկը պատկանում է նշված խմբերից որեւէ մեկին, իսկ մյուսը ՀՀ քաղաքացի է: Համակարգը բաց է նաեւ ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաների համար, որոնց ծնողները ցանկանում են երեխաներին հայտագրել հայերենով ուսուցմամբ դասարաններում: Երկյակ, եռյակ, քառյակ եւ ավելի երեխաներից առնվազն մեկի հայտագրումը որեւէ հանրակրթական ուսումնական հաստատությունում ապահովում է մյուս երեխաների ընդունելությունը նույն հաստատություն՝ անկախ լիցենզիայով տրված տեղերի քանակից:

Առցանց հայտագրումն իրականացվում է երկու քայլով.

Քայլ 1

Մուտք գործեք https://my.emis.am հարթակ եւ բացեք օգտատիրոջ էջը: Էջը բացելու մանրամասն քայլերը ներկայացված են «Գրանցում my.emis.am» տեսաուղեցույցում:

Քայլ 2

Եթե արդեն անցել եք նույնականացում եւ https://my.emis.am հարթակում ունեք ձեր էջը, ապա սպասեք հայտագրման մեկնարկին, որպեսզի ընտրեք դպրոցը: Հայտագրման քայլերը ներկայացված են «Ավագ դպրոցում հայտագրում» տեսաուղեցույցում:

Հաշվի առնելով, որ գրանցումը ժամանակատար է, մեկ անգամ եւս խորհուրդ ենք տալիս մինչեւ հայտագրման մեկնարկը գրանցվել եւ համակարգում անցնել նույնականացում, որից հետո հնարավոր կլինի երեխային հայտագրել ձեր նախընտրած դպրոցում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ նույն օգտահաշվից տարբեր սարքերով հնարավոր չէ միաժամանակ մուտք գործել համակարգ եւ հայտագրել երեխային, ուստի հորդորում ենք հայտագրումն իրականացնել մեկ օգտահաշվից, մեկ համակարգչով:

Հիշեցնենք՝ հուլիսի 20-ից օգոստոսի 2-ն իրականացվել է առաջնահերթություն ունեցող սովորողների /տվյալ դպրոցում սովորող քույր, եղբայր ունեցող սովորողներ, ինչպես նաեւ տվյալ դպրոցի աշխատակիցների երեխաներ/ ընդունելության առցանց հայտագրումը, որն արդեն ավարտվել է:

Օգոստոսի 11-ին՝ ժամը 09:00-ից, հայտագրում կիրականացվի նաեւ ծնողների ընտրությամբ ռուսերենով ուսուցմամբ դասարաններում սովորելու համար:

Ռուսերենով ուսուցմամբ դասարաններում սովորելու համար կարող են դիմել օտարերկրյա քաղաքացիների, երկքաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (նրանց օրինական ներկայացուցիչների), ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց երեխաները, ինչպես նաեւ այն սովորողները, որոնց ծնողներից առնվազն մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է:

Հայտագրման անհրաժեշտություն չկա այն դպրոցներում, որտեղ ընդունելությունը կիրականացվի սահմանված ներքին ընթացակարգերով, մասնավորապես, մասնագիտացված դպրոցներում, բարձրագույն ուսումնական հաստատությունների ենթակայությամբ գործող դպրոցներում, հանրակրթական դպրոցների «Արհեստական բանականություն» սերունդ դասարաններում, ինչպես նաեւ այն միջնակարգ դպրոցներում կամ վարժարաններում, որոնցում, ծնողի դիմումի համաձայն, սովորողները կփոխադրվեն նույն ուսումնական հաստատության կրթության երրորդ աստիճան:

ԶԵԿՈՒՅՑ

«Ազատ Քվե» դիտորդական առաքելությունը հրապարակել է ՀՀ ԱԺ 2026 թվականի ընտրությունների կարճաժամկետ դիտարկման զեկույցը:

«Ազատ Քվե» դիտորդական առաքելությունն ամփոփել է ՀՀ Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունների ընթացքում Տավուշի, Լոռու եւ Շիրակի մարզերում իրականացված դիտորդական առաքելության արդյունքները:

Զեկույցը ներառում է ընտրության օրվա ընթացքում իրականացված դիտարկումների հիման վրա արձանագրված փաստերը, ընտրական գործընթացի տարբեր փուլերում գրանցված հիմնական դիտարկումներն ու խախտումները, դրանց վերլուծությունը, ինչպես նաեւ ընտրական գործընթացների թափանցիկության, հաշվետվողականության եւ արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունները:

Երեք մարզերում իրականացված կարճաժամկետ դիտարկումը ցույց է տալիս, որ դիտարկված տեղամասերում չեն արձանագրվել քվեատուփի լցոնման, բազմակի քվեարկության, ֆիզիկական բռնության կամ արդյունքների միտումնավոր կեղծման դեպքեր:

Այնուամենայնիվ, արձանագրված խախտումները վկայում են համակարգային բնույթի մի շարք խնդիրների մասին.

1. Հրապարակայնության եւ վերահսկելիության պակաս՝ պայմանավորված զգալի թվով տեղամասերում տեսանկարահանման միջոցների բացակայությամբ եւ առանց հրապարակված նորմատիվ հիմքի կիրառվող ընտրողական մոտեցմամբ:

2. Ընտրողի ընտրական իրավունքի կամայական սահմանափակումներ՝ ինչպես քվեարկության ընթացքում (կտրոնի կորուստ, Ձեւ 9 տեղեկանքի տեխնիկական խոչընդոտ), այնպես էլ փակման պահին (20:00-ի դրությամբ տեղամասում գտնվող ընտրողների ցթույլատրում):

3. Դիտորդների գործունեության խոչընդոտում՝ ճնշման դրսեւորումներ, ագրեսիվ վարքագիծ եւ գրանցամատյանում արձանագրումների կատարումից հրաժարում, ինչը մի շարք դեպքերում պահանջել է առաքելության ղեկավարության, իրավաբանի կամ ԿԸՀ-ի անմիջական միջամտություն:

4. Հանձնաժողովների անդամների ոչ բավարար պատրաստվածություն՝ հատկապես ամփոփման փուլում՝ կտրոնների, կնիքների, դրոշմանիշների հաշվառում եւ քվեաթերթիկների վավերականության որոշում:

5. Վստահված անձանց ոչ իրավաչափ միջամտություն՝ ընտրողների ուղղորդում, կուտակումների առաջացում, հաշվարկին միջամտություն եւ հանձնաժողովների որոշումների վրա ազդելու փորձեր:

6. Մատչելիության խնդիրներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար թեքահարթակների բացակայություն մի շարք տեղամասերում:

Արձանագրված խախտումների հիման վրա «Ազատ Քվե» դիտորդական առաքելությունը ներկայացրել է մի շարք առաջարկություններ, որոնք վերաբերում են օրենսդրական եւ նորմատիվ փոփոխություններին, ընթացակարգային եւ կազմակերպչական բարելավումներին, դիտորդների իրավունքների պաշտպանությանը, հաշվետվողականությանը եւ արագ արձագանքին:

Զեկույցի հեղինակները վստահ են, որ այն կնպաստի ընտրական գործընթացների վերաբերյալ փաստահեն հանրային քննարկումների խթանմանը եւ կծառայի որպես օգտակար ռեսուրս ընտրական համակարգի շարունակական բարելավման համար:

Զեկույցի ամբողջական տարբերակին կարելի է ծանոթանալ այստեղ՝ https://bit.ly/4pSaHFe:

●*«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՆՇԵԼ ԵՆ

ՏՊԱՎՈՐԻՉ ԹԵՄԱՏԻԿ ԵՐԵԿՈՒՅԹ

Ռիհաննան եւ A$AP Rocky-ն որդու՝ Ռայոթի 3-ամյակը նշել են տպավորիչ Spider-Man թեմատիկ երեկույթով:

Աշխարհահռչակ երգչուհի Ռիհաննան եւ ռեփեր A$AP Rocky-ն շքեղ Spider-Man թեմատիկ ծննդյան երեկույթ են կազմակերպել իրենց որդու՝ Ռայոթի 3-ամյակի առթիվ: Տոնակատարությունը տեղի է ունեցել օգոստոսի 1-ին, եւ սոցիալական ցանցերում տարածված տեսանյութերից երեւում է, որ միջոցառման վայրը ձեւավորված էր Spider-Man-ի ոճով՝ կարմիր, կապույտ եւ սեւ գույներով, թեմատիկ փուչիկներով ու «Riot 3» գրություններով:

Երեկույթի ամենաուշագրավ հատվածներից մեկը «քեյքի բարն» էր, որտեղ հյուրերը կարող էին պատվիրել տորթի կտոր՝ ընտրելով տարբեր համեր, սոուսներ եւ հավելումներ: Տեսանյութերում երեւում է նաեւ, թե ինչպես են Ռիհաննան, A$AP Rocky-ն եւ ներկաները միասին երգում «Happy Birthday»-ը փոքրիկ Ռայոթի համար:

Տոնական միջոցառմանը Ռիհաննան կրել էր բաց վարդագույն զգեստ, իսկ մազերը հյուսել էր հյուսքերի տեսքով: A$AP Rocky-ն ընտրել էր ավելի առօրյա կերպար՝ սպիտակ շապիկ, բեյսբոլի գլխարկ եւ գլխին կապած շարֆ:

Զույգը միասին է 2020 թվականից: Նրանք երեք երեխա ունեն՝ ավագ որդի ՌԶԱ-ն, որը 4 տարեկան է, Ռայոթը, որը դարձավ 3 տարեկան, եւ փոքրիկ դուստրը՝ Ռոքին, որն այժմ 10 ամսական է:

Ռիհաննան եւ A$AP Rocky-ն հայտնի են իրենց երեխաների ծննդյան տոները յուրահատուկ ձեւով կազմակերպելու ավանդույթով: Այս տարվա մայիսին նրանք Նյու Յորքում ՌԶԱ-ի 4-ամյակի կապակցությամբ ամբողջությամբ վարձակալել էին Sloomoo Institute-ը՝ ինտերակտիվ սլայմ-կենտրոնը, որտեղ հյուրերը մասնակցել էին սլայմ պատրաստելու արհեստանոցների եւ տարբեր զվարճանքների: Ավելի վաղ նրանք ՌԶԱ-ի ծննդյան առթիվ կազմակերպել էին նաեւ Color Factory-ի տարածքում անցկացվող գունային եւ ինտերակտիվ միջոցառում:

Թեեւ Ռիհաննան եւ A$AP Rocky-ն հիմնականում փորձում են իրենց երեխաներին հեռու պահել հանրային ուշադրությունից, նրանք հաճախ են խոսում ծնող լինելու երջանկության մասին: Հունիսին A$AP Rocky-ն Լոս Անջելեսում կայացած համերգի ընթացքում բեմից դիմել էր որդուն՝ ասելով. «Ռայոթ Ռոուզ, հայրիկը սիրում է քեզ»:

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գեւորգ Մանթաշյանը հուլիսի 30-ին ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Հնդկաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Նիլակշի Սահա Սինհային, ով ավարտում է դիվանագիտական առաքելությունը Հայաստանում: Այս մասին հայտնել են ՀՀ ԲՏԱ նախարարությունից:

Գեւորգ Մանթաշյանը բարձր է գնահատել դեսպան Նիլակշի Սահա Սինհայի ներդրումը հայ-հնդկական հարաբերությունների զարգացման գործում՝ մասնավորապես բարձր տեխնոլոգիաների եւ ռազմարդյունաբերության:

Նախարարի առաջին տեղակալն ընդգծել է, որ համատեղ աշխատանքը մշտապես առանձնացել է արդյունավետությամբ, գործնական արդյունքներով եւ կոնկրետ ձեռքբերումներով՝ վստահություն հայտնելով, որ ձեւավորված համագործակցությունը շարունակական բնույթ կկրի նաեւ ապագայում: Դեսպան Նիլակշի Սահա Սինհան շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության եւ պաշտոնավարման ողջ ընթացքում ձեւավորված սերտ համագործակցության համար՝ նշելով, որ մեծ պատիվ է եղել դիվանագիտական առաքելություն իրականացնել Հայաստանում: Նա անդրադարձել է նախարարության հետ համատեղ իրականացված ծրագրերին եւ ձեռքբերումներին՝ ընդգծելով, որ Հայաստանը մեծ ներուժ ունի բարձր տեխնոլոգիաների եւ արհեստական բանականության ուղղություններում եւ կարող է կարեւոր դեր զբաղեցնել համաշխարհային տեխնոլոգիական քարտեզի վրա:

Անդրադարձ է կատարվել նաեւ երկու երկրների մասնավոր հատվածների միջեւ B2B ձեւաչափով կապերի ակտիվացմանը, ինչպես նաեւ հայկական եւ հնդկական տեխնոլոգիական ընկերությունների մասնակցությանը Հայաստանում եւ Հնդկաստանում անցկացվող ոլորտային համաժողովներին եւ մասնագիտական միջոցառումներին:

Հանդիպման ավարտին Գեւորգ Մանթաշյանը եւս մեկ անգամ շնորհակալություն է հայտնել դեսպան Նիլակշի Սահա Սինհային արդյունավետ համագործակցության համար եւ հաջողություններ մաղթել հետագա դիվանագիտական գործունեության ընթացքում:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՖԻՖԱ-Ն ԿԱՐՈՂ Է ԱՐԳԵԼԱՓԱԿԵԼ

Թվում էր, թե Մադրիդի «Ռեալն» ուր որ է կհայտարարի «Լայպցիգից» եզրային հարձակվող Յան Դիոմանդեի տեղափոխության մասին: Այնուամենայնիվ, գործարքի մասին մինչեւ հիմա պաշտոնապես չի հայտարարվել, եւ իսպանական AS պարբերականը բացահայտում է դրա պատճառը, գրում է armsport-ը:

Աղբյուրի տեղեկություններով՝ 19-ամյա Դիոմանդեն խնդիրներ ունի իր նախկին գործակալի հետ. Մաքս Գրադելը պնդում է, որ ֆուտբոլիստը խախտել է պայմանագրի կետերը: «Ռեալը» տրանսֆերը համաձայնեցրել է Roc Nation գործակալության հետ եւ տեղյակ չի եղել խաղացողի նախկին ներկայացուցչի հետ ունեցած խնդրի մասին: Նշվում է, որ Մաքս Գրադելը բողոք է ներկայացրել ՖԻՖԱ: Այժմ կառույցը կարող է կայացնել ցանկացած որոշում՝ թույլատրել տրանսֆերը, հետաձգել այն կամ նույնիսկ ամբողջությամբ արգելափակել գործարքը:

20–ՐԴ ՄՐՑԱՇՐՋԱՆՆ Է

«Ինտերի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը կիսվել է իր մտքերով առաջիկա մրցաշրջանի վերաբերյալ, գրում է armsport-ը: Հուլիսի սկզբին 37-ամյա ֆուտբոլիստը նոր պայմանագիր կնքեց «Ներաձուրիի» հետ, որը նախատեսված է մինչեւ 2027 թվականի ամառը: «Սա իմ 20-րդ մրցաշրջանն է պրոֆեսիոնալ ֆուտբոլում, եւ ես, իհարկե, շատ ուրախ եմ: Սա ցույց է տալիս, որ ես ամեն ինչ ճիշտ եմ արել իմ կարիերայի ընթացքում: Ահա թե ինչու եմ կարողացել այդքան տարիներ անցկացնել ֆուտբոլում. դա կարեւոր է ինձ համար», - ասել է Մխիթարյանը InterTV-ին տված հարցազրույցում:

Անցյալ մրցաշրջանում հայ կիսապաշտպանը «Ինտերի» հետ նվաճեց Իտալիայի առաջնության չեմպիոնի տիտղոսը եւ Իտալիայի գավաթը:

ԴԵՌ ՉԻ ԱՎԱՐՏԵԼ

Իսպանական Fichajes հրատարակության տվյալներով՝ «Ռեալ Մադրիդը» շարունակում է հետաքրքրվել Ճապոնիայի հավաքականի կենտրոնական հարձակվող Այասե Ուեդայի ծառայություններով, հայտնում է armsport-ը:

Ըստ աղբյուրի, մադրիդյան ակումբին գրավում է հատկապես ֆուտբոլիստի տրանսֆերային ոչ բարձր արժեքը: «Ֆեյենորդը» Ուեդայի տրանսֆերի համար պահանջում է 35 միլիոն եվրո (այդ գումարն է նշված որպես կլաուսուլա պայմանագրում):

Հաղորդվում է նաեւ Պրեմիեր լիգայի ակումբների հետաքրքրության մասին. ֆուտբոլիստի տրանսֆերի շուրջ արդեն մեկ ամիս է ինչ աշխատում է «Էվերտոնը»: «Բրայթոնը», որտեղից օրերս «Չելսի» տեղափոխվեց Դենի Ուելբեքը, եւս դուրս է եկել տրանսֆերային շուկա՝ նոր հարձակվող ձեռք բերելու համար եւ Այասեն եւս գտնվում է «ճայերի» դիտակետում:

Այասեն երկու գոլ է խփել այս տարի կայացած Աշխարհի առաջնությունում, նաեւ դարձել է Նիդերլանդների Էրեդիվիզիի 25/26 մրցաշրջանի գլխավոր ռմբարկուն՝ 27 գոլով:

● *Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում օգոստոսի 14-ին՝ ժամը 19:00-ին, կկայանա «ԺԻԶԵԼ» բալետը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Հայ առաքելական եկեղեցին բժշկության բազմաթիվ հրաշքներ է գործել եւ գործում իր սղաասավոր հոգեւորականների, հավատացյալների միջոցով: Սակայն այդ մասին գրեթե չի խոսվում: Ինչո՞ւ:

Տանյա Գալստյան, 68 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայ առաքելական եկեղեցու կարգով քահանան իրեն դիմած հիվանդի վրա է դնում Խաչն ու Ավետարանը եւ աղոթում, որ Աստված նրան բժշկություն պարգեւի: Հիվանդը բժկվում է ոչ միայն հոգեւորականի աղոթքով, այլեւ, որ ավելի կարեւոր է, իր աղոթքով եւ հավատով: Բժկվելով՝ նա գնում եւ Աստծուն փառք է տալիս Նրա անչափ ողորմածության համար: Եկեղեցին չի պարտադրում հիվանդին իր բժշկության մասին պատմել որեւէ մեկին: Նույնիսկ հոգեւորականը կարող է չիմանալ այդ մասին, քանի որ հիվանդը աղոթքից հետո գնում է եւ կարող է չվերադառնալ եւ չպատմել իր բժշկվելու մասին: Այսպես Եկեղեցին գործադրում է Տիրոջ պատվիրանը. «Սովորեք ինձնից, որովհետեւ հեզ եմ ու սրտով խոնարհ» (Մատթ 11.29) եւ «Անպիտան ծառաներ ենք. ինչ որ պարտավոր էինք անել, այն արեցինք» (Ղուկ 17.10):

Հայ առաքելական սուրբ եկեղեցի

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս եւ ի՞նչ ընթացակարգով դիմել այլընտրանքային զինվորական ծառայության անցնելու համար:

Տիգրան Կարապետյան, 58 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Այլընտրանքային ծառայության ուղարկվում է այն քաղաքացին, որը մինչեւ հերթական զորակոչին նախորդող հունիսի 1-ը կամ նոյեմբերի 1-ը «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու վերաբերյալ դիմել է իր զինվորական հաշվառման տարածքային ստորաբաժանման ղեկավարին, եւ որի վերաբերյալ 8.1-ին հոդվածով սահմանված իրավասու պետական կառավարման մարմնի ղեկավարը, հաշվի առնելով այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի (այսուհետ՝ հանրապետական հանձնաժողով) եզրակացությունը, որոշում է կայացրել ուղարկել այլընտրանքային ծառայության: Հանրապետական հանձնաժողովը մշտապես գործող մարմին է եւ կազմված է տարածքային կառավարման, արդարադատության, առողջապահության, աշխատանքի եւ սոցիալական հարցերի, կրթության եւ գիտության, ոստիկանության ու պաշտպանության բնագավառներում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինների, ինչպես նաեւ վարչապետի աշխատակազմի՝ ազգային փոքրամասնությունների եւ կրոնի ոլորտները համակարգող ստորաբաժանման մեկական ներկայացուցիչներից: Հանրապետական հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է վարչապետը: Հանրապետական հանձնաժողովի ներքին գործավարությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

17.12.2003թ. «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի դրույթները չեն տարածվում պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ տարկետման իրավունք ստանալու հիմքունեցող քաղաքացիների վրա:

ՀՀ ՊՆ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Կոտայքի մարզում բախվել են հարսանիքի մեկնող «Mercedes G»-ն ու «Nissan X-Trail»-ը, կան վիրավորներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 12 + 17 + 28 + 33
	Կոտայքի լեռներ	+ 12 + 16 + 27 + 32
	Կոտայքի նախալեռներ	+ 20 + 23 + 34 + 37
	Գեղարքունիք	+ 11 + 16 + 24 + 29
	Լոռի	+ 16 + 20 + 27 + 30
	Տավուշ	+ 16 + 19 + 28 + 30
	Արագածոտնի լեռներ	+ 12 + 16 + 27 + 30
	Արագածոտնի նախալեռներ	+ 19 + 24 + 33 + 38

	Արարատ	+ 20 + 24 + 36 + 38
	Արմավիր	+ 21 + 24 + 37 + 39
	Վայոց ձորի լեռներ	+ 11 + 15 + 27 + 30
	Վայոց ձորի նախալեռներ	+ 21 + 25 + 37 + 39
	Սյունիքի լեռներ	+ 9 + 14 + 22 + 25
	Սյունիքի նախալեռներ	+ 11 + 15 + 28 + 30
	Սյունիքի հովիտներ	+ 18 + 22 + 35 + 38
	Երեւան	+ 23 + 25 + 36 + 38

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **03.08.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*